ՀՀ վարչապետ՝Կ.Կարապետյանին ,

ՊԵԿ նախագահ՝ Վ.Հարությունյանին

ՊԵԿ նախագահի տեղակալներ՝

Կ. Բրությանին

Ս.Ավետիքյանին

Գ.Առաքելյանին

Վ. Միրումյանին

Ձեզ ենք ներկայացնում մեր առաջարկները: Մինչ բուն առաջարկների ներկայացնելը կցանկանայինք անրադառնալ մի քանի խնդիրների , որոնք խոչնդոտում են տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեությունը

1)Մաքսային առժեքի որոշման բարդ գործընթացը, որի հետևանքով առաջանում է անհամապատասխանություն իրական գների և փաստաթղթով գների մինչև ,որի հետևանքով շատ գնորդներ խուսափում են հաշիվ- ապրանքագրերից , մտավախություն ունենալով հատել ՓՄՁ-ի համար նախատեսված շեմը ,և հայտնվել ԱԱՀ-ով աշխատելու դաշտում :ԱԱՀ-ի դաշտում հայտնվելու մտավախության պատճառները հետևյալն են՝

Ա)Իրական գներին ոչ համապատասխանող ձեռքբերման փաստաթղթեր ,որոնք անհնարին են դարձնում վարել օրենքին համապատասխան հաշվապահություն , ստեղծելով կեղծ իրականուփյուն ,որի հետևանքով տնտ. սուբյեկտը անկախ իր կամքից դարնում է խոցելի :

Բ)Երկրորդ պատճառը ֆինանսական է : Ձեր կոզմից առաջարկված և ՀՀ Աժ կողմից հաստատված նոր Հարկային օրենսգրքով սահմանված շեմը կազմում է մոտ 60.000.000 ՀՀ դրամ.:Եկեք վերլուծենք այս թիվը :

Ենթադրենք տնտ. սուբյեկտները միջինացված ունեն 10%-ի չափով եկամուտ (շատ դեպքերում դա ավելի նվազ է) : Ստացվում է տարեկան կտրվածքով 6.000.000 դրամ ,իսկ ամսեկան 500.000 ՀՀ դրամ եկամուտ : Եթե այստեղից նվազեցնենք վարձակալության գումարը , տնտ. սուբյեկտին անհրաժեշտ տնտեսական ծախսերի գումարը , հնարավոր վարկերի մարման տոկոսների գումարը ,կստացվի ,որ լավագույն դեպքում տնտ, սուբյեկտին մնում է 100-200.000 դրամի սահմաներում եկամուտ, որով նա ակնհայտորեն չի կարող վճարել առնվազն 1 հաշվապահի և 1 հաշվետարի աշխատավարձը , որոնք անհրաժեշտ են օրենքի պահանջները կատարելու համար : Ստեղծվում է մի իրավիճակ , որով անհնարին է դարնում միջին ձերնարկատերերի գործունեությունը : Այս իրավիճակը ստիպում է տվյալ սուբյեկտներին, վճարել ավելորդ գումարներ և թագնվել ավելի խոշորի ետևում ,և ոչ թե ավելի մանրի ետևում , ինչպես որ հաճախակի անհարկի նշվում է: Շեշտում ենք ,որ միջինը կատարում է ավելորդ ծախսեր և թագնվում է ավելի խոշորի ետևում , դեֆորմացնելով վիճակագրական պատկերը , որը ոչ մի կերպ չի համապատասխանում իրականությանը, ըստ որի արտացոլվում է պատկեր համաձայն ,որի ՓՄՁ-ները վճարում են չնչին գումարներ , ինչը ամենևին այդպես չէ :Մեր առաջարկները ընդունվելու դեպքում կստեղծվեն նպաստավոր պայմաններ միջին բիզնեսի զարգացման համար և կվերանա նաև այս վիճակագրական խնդիրը և մենք կունենաք իրական պատկեր ,որը կտա նաև մուլտիպլիկատիվ էֆեկտ : Կան այլ բազմաթիվ խնդիրներ , որոնք այսօր հարկ չենք համարում ներկայացնել , քանի որ մեր առաջարկները ընդունելու դեպքում դրանց քննարկելու անհրաժեշտությունը վերանում է :

Առաջարկներ

Տարանջատել ներմուծողներին և ոչ ներմուծողներին սահմանելով հետևյալ հարկման դրույքաչափերը :

1.Ներմուծող 4%, երկու տոկոս նվազեցման հնարավորությամբ վաճառքի հաշիվ- ապրանքագրերի տրամադրելու դեպքում : Հարկման բազա հանդիսանում է մաքսազերծումից հետո ձևավորված ապրանքների իքնարժեքի հանրագումարը: Այս եղանակով ներմոոծողների համար շեմը վերանում է

2.Ոչ ներմուծողների համար սահմանել գործունեության 2 եղանակ:

Ա)Ոչ ներմուծողների համար սահմանել 2% հարկման դրույքաչափ, 1% նվազեցման հնարավորությամբ, հաշիվ-ապրանքագրերով վաճառք իրականացնելու դեպքում :

Բ)Ոչ ներմուծողների համար սահմանել հաստատագրված վճար (ըստ գոտիների):Տվյալ եղանակը ընտրած տնտ.սուբյեկտները իրենց դիմումի համաձայն հատուկ կարգավիճակ կստանան : Հարկային տեսչոության կողմից պետք է ձերնարկվեն համապատասխան միջոցներ ,որոնք կբացառեն էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերի դուրս գրումը տվյալ սուբյեկտների համար , տեղական ապրանք վաճառելու դեպքեում տվյալ սուբյեկտները պարտավոր են տեղեկացնել դրա մասին հարկային տեսչություն :

Փորձենք այս ամենը պատկերել սխեմատիկ



Որտեղ X-ը ապրանքների ինքնաժեքի հանրագումարն է , տվյալ դեպքում ՓՄՁ-ները վճարում են հաստատագրված վճար նրանք զրկվում են ներմուծողից նվազեցված գնով ապրանք գնելուց : Այս դեպքում ներմուծված ապրանքի վերջնական վաճառքից պետությունը ստանում է 4% հարկ + հաստատագրված վճար



Տվյալ դեպքում պետությունը ներմուծված ապրանքի վերջնական վաճառքից ստանում է 5% հարկ , 2% վճարում է ներմուծողը ,1 % վերավաճառող ՓՄՁ-ն , 2% գնորդ ՓՄՁ-ն : Եթե այս շղթան շարունակվում է պետությունը ստանում է 1% հավելյալ եկամուտ յուրաքանչուր վաճառքից :

Առաջարկի տրամբանությունը կայանում է նրանում . որ մաքսային սահմանին վճարվում է կամ ֆիկսվում է պետության կողմից ակնկալվող գումարը , իսկ տնտ. սուբյեկտները ազատվում են ավելորդ հսկողությունից : Հաշիվ-ապրանքագրերով ապրանք վաճառելը դառնում է շահավետ , քանի որ ստեղծում է նվազեցման հնարավորություն : Սակայն եթե դա տեղի չի ունենում պետությանը վնաս չի հասցվում : Ի սպառ վերանում է հսկողության անհրաժեշտությունը :

Մենք բազմակողմանի քնարկել ենք այս առաջարկները և պատրաստենք լսել Ձեր դիտողությունները : Սակայն մի բանում միակամ ենք այն է , եթե հարկերի մեծ մասը պահանջում եք վճարել սահմանին , ապա վերձրեք նաև մյուս անհամեմատ փոքր մասը ,ազատելով մեզ տվյալ հարկման ձևի պատճառով ստեղծվող պրոբլեմատիկ թղթաբանությունից :

3.Աշխատակիցներին չգրանցելու հետ կապված ունենք հետևյալ առաջարկը :Յուրաքանչյուր 20մ^2 +5% տնտ. սուբյեկտը պարտավորվում է գրանցել մեկ աշխատակից:

Օրինակ 20մ^2 կրպակը կարող է սպասարկել հենց ինքը ԱՁ-ն : Եթե տաղավարի մակերեսը 50մ^2 ԱՁ-ն պարտավոր է , գրանցել 2 աշխատակից ,այսինքն ԱՁ-ի հետ ընդամենը 3 հոգի :Տվյալ դեպքում տնտ. սուբյեկտը ազատվում է հսկողությունից : Եթե տնտ. սուբյեկտը համաձայն չէ տվյալ դրույթի հետ գրավոր դիմում է հարկային տեսչություն , և կարող է ենթարկվել ստուգումների հայտնվելով , թիրախային խմբում

4.Մաքսային արժեքի որոշման հետ կապված նույնպես կան խնդիրներ : Չնայած վերջին 7-8ամիսներին առկա է էական դրական տեղաշարժ ,որոշ խնդիրներ դեռ մնում են :

Ինչ ենք առաջարկում այդ կապակցությամբ :

Ներմուծող տնտ. սուբյեկտը ներկայացնում է փաստաթղթերը և վճարում բյուջե՝ իր կողմից ներկայացված փաթթոթի առաջացած վճարումների չափով : Եթե մաքսային մարմինները տեսնում են ռիսկայնություն և ներկայացնում են այլ հաշվարկ , ներմուծողը ներկայացված և վճարված գումարի տարբերությունը դնում են դեպոզիտ հաշվի վրա ,որից հետո , տրվում է ժամանակ մոտ մեկ ամիս լրացուցիչ պարզաբանումների համար : Ներկայացվող պահանջները պետք է լինեն հստակ և հետապնդեն նպատակ պարզել իրավիճակը , այլ ոչ թե ներկայացնել այնպիսի պահանջներ ,որոնք անիրականանելի են : Ներմուծողը պարտավոր է ստույգ նշել ձեռքբերման վայրը ,տրամադրել էլ կայքը , նպաստել բոլոր հարցերի պարզաբանմանը : Պարզաբանումներից հետո կայացվում է որոշում և կատարվում է համապատասխան հաշվանցումներ : Եթե տնտ. սուբյեկտը աներկբա ,հստակ ապացուցում է ապրանքի գինը , հաշիվը ապասառեցվում է,եթե ոչ գումարը փոխանցվում է բյուջե : Հնարավոր է նաև ուսումնասիրության հետևանքով գումարի մի մասը փոխանցվի բյուջե, մի մասը տնտ. սուբյեկտին :

Դա հնարավորություն կստեղծի գործնական մթնոլորտում ճշտել բոլոր հարցերը , այլ ոչ թե թերություն գտնելով վնաս հասցնել տնտեսվարողին :

5. Առաջարկում ենք նաև հաստատել պարզ հաշվետվություն բլանկեր

Օրինակ՝ շրջանարվող գումար ,

առաջացած հարկ ,

տրամադրված հաշիվ-ապրանքների գումար

նվազեցվող գումար

վճարման ենթակա գումար

6.Վերջնական որոշում ընդունելուց հետո օրենսդրությունը թողնել անփոփոխ առնվազն 5 տարի մինչև մյուս ընտրությունները :

Ունեք նաև այլ առաջարկներ որոնք հանդիսանում են այս առաջարկների ածանցյալը , դրանք ձեզ կներկայացնեք լրացուցիչ :

Մեր առաջարկները նպատակ են հետապնդում ստեղծել արդար և ապահով հարկման համակարգ ,երբ բոլոր օրակները մոտիվացված են և ոչ մի լումա պետական հարկ չի փոշիանում : Մենք ցանկանում ենք , որ շատ ռիսկային և դժվար պայմաներում աշխատող մարդիկ առժանանան հարգանքի, այլ ոչ թե լինեն պերմոնենտ կասկածի և ստուգումների առարկա :

Հուսով ենք միասին կգտնենք փոխշահավետ և իմաստուն որոշում :

Հարգանքներով ՓՄՁ-ը ներկայացուցիչներ